



ԵՐԱՌԻՇԱՔԹԻ, 30 Օգոստոս, 2021

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 23

ԻՐԻԿՆԱՅԻՆ ԱՂՕԹՔ

Տէրն է Հովիւս,

ուստի ոեւէ բանի կարօտ պիտի չմնամ:

Դալար արօտավայրերու մէջ կը մակաղեցնէ վիս,

հանգստարար ջուրերուն վիս կը տանի:

Կը վերանորոգէ վիս եւ ուղիղ ճամբաներէ կ'առաջնորդէ,

որպէսպի իր անունը փառաւորուի:

Նոյնիսկ երբոր մահաստուեր ծորերէ կ'անցնիմ,

չարիքէն չեմ վախնար, Տէր, որովհետեւ դուն իմ հետս ես:

Քանի ցուպդ վիս կ'առաջնորդէ եւ գաւազանդ կը պաշտպանէ.

ես ինքզինքս ապահով կը վգամ:

Ինձի խնճոյքի սեղան կը պատրաստես

թշնամիներուս դիմաց. իբրեւ պատիւ՝

անուշահոտ իւղով կ'օծես գլուխս,

եւ բաժակս մինչեւ բերան կը լեցնես:

Տէր, վստահ եմ, որ բարութիւնդ եւ շնորհքդ

անպակաս պիտի ըլլան վրայես՝

որպէսպի կեանքիս ամբողջ տեւողութեան

տաճարիդ մէջ բնակիմ:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սմեռաստուրք Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,

աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնայ ի ճանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



ԱՌԱԿԱՑ 15 ԳԼՈՒԽ

ԻՍՎԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԹԱՄՏՈՒԹԻՒՆ 15:14-33

Այս առակները իրենց իմաստը կ'ստանան, օգտագործելի կը դառնան երբ այս բոլորը կ'իրագործուին իմաստությամբ, ինչ որ այս գիրքը ամբողջությամբ այդ մասին կը խօսին: Շարունակելով խօսքը, կը ներկայացնէ թէ ինչպէս իմաստությամբ լեցուն սիրտը գիտութիւն կը խնայուէ, այս պարագային գիտութիւն ըսելով, կը նշանակէ Աստուած ճանաչողութեան գիտութիւնը: Աստուծոյ կամքը հասկնալու գիտութեան մասին է խօսքը: Ինչպէս Սաղմոսերգուն պիտի ըսէ. «Ճաշակեցէք եւ փրկեցէք, զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա»: Անգամ մը որ ճաշակենք ու փեսնենք Անոր քաղցրութիւնը աւելին պիտի ուզեն:

Հերաբրքրականօրէն 15րդ համարը այսօրուան մեր վիճակը կը յիշեցնէ: «Վշարլից մարդուն բոլոր օրերը գէշ են, բայց ուրախ սիրտը մշտնջենական կոչունքի մէջ է»: Այո, այս դժուարին ու անորոշ օրերուն, ինչպիսի քրմադրութեան մէջ ենք, եւ որքանով մեր սրտերը ուրախ են: Այսօրուան մեր ունեցած ուրախութիւնը ժամանակաւորն է, խաբուսիկը, մինչ Պօղոս Առաքեալ կը փափաքի որ հաւատարեցեալները ուրախ ըլլան, սակայն ոչ այս աշխարհի փութած ուրախութեամբը, այլ Քրիստոսի փութած: Ուրախութիւն մը որ ոչ մէկ բան կրնայ մեզմէ խլել: Ահա այն արեւն, այդպիսի ուրախ սիրտ ունեցող մարդուն համար կոչունքի պահ է, հարսանիք է, ուրախութիւն մը, որուն մէջ վախ չկայ, որ յանկարծ չըլլայ թէ այդ ուրախութիւնը կորսուի կամ առնուի: Մինչ վշտով լեցուն մարդուն բոլոր օրերը գէշ են:

16-17 համարները կու գան փանելու մեզի գախարհիքը այդ ուրախ սիրտ ունենալուն եւ այդ ուրախ սրտով մնայուն կոչունքի վիճակ ունենալուն: «Աւելի աղէկ է քիչ բան ունենալ Տիրոջ երկիրովը, քան մեծ գանձ՝ խռովութիւնով: Աւելի լաւ է խոտեղէն կերակուր ուրել, բայց սիրոյ մէջ, քան՝ պարարտ գուարակ՝ արելութեամբ»:

Գիտէք, յաճախ երեւոյթներ կան, որոնց պարճառը մենք իսկ ենք, եւ սակայն չենք անդրադառնար: Ահա 18րդ համարը կու գայ եւ այդ մէկը ցոյց կու փայ: Վէճ վիճաբանութիւն, կռիւ, թշնամութիւն, որոնք կու գան եթէ ոչ նոյնինքն բարկութենէն, իսկ եթէ երբեք համբերութիւն ունինք, երկայնամտութիւնը ունինք, ապա այդ կռիւը կը դադրի: Ուրեմն որքան կարիքը կայ մենք մեր վրայ աշխատելու, թէ արդեօք որքանով ունինք այդ համբերաբարութիւնը, երկայնամտութիւնը:

«Իմաստուն փղան իր հայրը կ'ուրախացնէ, բայց անմիտ փղան իր մօրը փրփմութիւն է» 20րդ համար: Այո, երբ մեր երեխաները նոյն իմաստությամբ կը դաստիարակուին, աւարտին անոնք կը դառնան մեզի համար ուրախութիւն, այլապէս փրփմութիւն: Ահա թէ ինչու կարեւոր է մեր զաւակները դաստիարակել ըստ այնմ աստուածային իմաստությամբ, այնպէս ինչպէս Աստուածաշունչ մարեանը պիտի ըսէ. «Կրթէ մանուկ իր ճամբան սկսած արեւն, որպէսզի երբ մեծնայ չխտորի»:

21րդ համարը յստակօրէն ցոյց կու փայ, թէ իմաստուն մարդն է որ իր ամբողջ ճիգը կ'ըլլայ ուղղելու իր ընթացքը, որովհետեւ իր հայեացքը դէպի յաւիտենականութիւն երթալն է, ուստի այնպէս մը կ'ուղղէ իր ընթացքը, որ աչժանի ըլլայ, մինչ անմիտ մարդուն համար յիմարութիւնը զբօսանք է, գուարճութիւն, այլ խօսքով մեղքը իրեն համար կ'ըլլայ հաճոյք:

24րդ համարը վերի եւ վարի փոփոխումն մասին կը ներկայացնէ, այլ խօսքով՝ յաւիտենական կեանքի կամ յաւիտենական փանջանքի: Աստուածաշունչը յստակօրէն կը սորվեցնէ որ երկու ճամբայ կայ, եւ Աստուած կը թելադրէ ըսելով, դուն այն ճամբան ընտրէ որ դէպի կեանք կը փանի, իսկ միւս ճամբան դէպի դժոխք, եւ դժոխք ըսելով կը հակնանք մահ: Այսպէս եւս խոհեմ մարդը, այլ խօսքով Աստուծոյ իմաստությամբ ապրող մարդը իր ընթացքով դէպի վեր երթալու ընթացքը կ'ունենայ, այլապէս դէպի վար երթալու, դէպի դժոխք:

Յստակ է որ Աստուած հակառակ է հպարտներուն, այնպէս ինչպէս եօթը մահացու մեղքերուն առաջինը հպարտութիւնն է 25 հմբ: Մինչ խոնարհներու պարագային ինք է որ անոնց սահմանը կը հաստատէ ու ամուր կը պահէ: Ասոր որպէս շարունակութիւն, նաեւ չար մարդոց խորհուրդները Աստուծոյ մօտ պիղծ են, մինչ պարկեպներուն խօսքերը հաճելի եւ Աստուծոյ ընդունելի:

Շարք մը ամբողջ այս խրատները, որոնք փարբեր-փարբեր երեսները կը ներկայացնեն մարդկային կեանքի, խորքին մէջ կը ներկայացնեն երկու խումբի պարկանող մարդիկը, կամ իմաստությամբ լեցուած ու առաջնորդուած անձը, կամ նոյն այդ իմաստութիւնը անարգողը: Անոր համար ալ արդիւնքները կ'ըլլան հետեւեալները, մէկը ազահութիւնը սիրող, անոր անձնատուր եղող, իսկ միւսի պարագային կաշառքէ զգուողը: Ի վերջոյ, այս բոլորին մէջ Աստուծոյ իմաստութիւնն է, որ եթէ խոնարհությամբ առնենք, ապա անոր արդիւնքը կ'ըլլայ այն փառքը որ Տէրը պարտաւոր է: Աղօթենք, որ արժանի ըլլանք այդ փառքին: